ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՀԲՄԾՁԲ-7/2-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 02 -ը ապրիլի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Մատինյանի Նշխար» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ն. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 07.03.2018թ. կնքված № ՀԲՄԾՁԲ-7/2-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **5 946 429.09 (հինգ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար չորս հարյուր քսանինը ամբողջ ինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Վաճառողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Մատինյանի Նշխար» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Վանաձոր, Բուսաբանական 3/6 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Վանաձորի մ/ճ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 163138202409 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 06924474 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ |

ՀՎ ... Էջ 01 07 26 156

Հավելված N 1
№ ՀԲՄԾՁԲ-7/2-5 գնման պայմանագրի N3 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/h | Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/ | Ծառայությունների մատուցումը ըստ կիսամյակների 2019թ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1-ին կիսամյակ |
| **1** | **Լոռու և Դիլիջանի տարածաշրջան, այդ թվում** | կգ | **62600.58** | **94.99** | **5946429.09** | **62600.58** |
| 1 | Վանաձոր - 72035 զորամաս | կգ | 3000 | 94.99 | 284970 | 3000 |
| 2 | Վանաձոր - 63853 (37082, 74472) զորամաս | կգ | 33100 | 94.99 | 3144169 | 33100 |
| 3 | Փամբակ - 53620 զորամաս | կգ | 500 | 94.99 | 47495 | 500 |
| 4 | Ստեփանավան - 51556 զորամաս | կգ | 5000 | 94.99 | 474950 | 5000 |
| 5 | Դիլիջան - 81151 զորամաս | կգ | 21000.58 | 94.99 | 1994845.09 | 21000.58 |

Հավելված N 2
№ ՀԲՄԾՁԲ-7/2-5 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/h | Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների | *Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ. | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| **1** | **Լոռու և Դիլիջանի տարածաշրջան, այդ թվում** | **2973187** | **5946429.09** | **5946429.09** | **5946429.09** | **5946429.09** | **5946429.09** | **5946429.09** | **5946429.09** | **5946429.09** |
| 1 | Վանաձոր - 72035 զորամաս | 142484 | 284970 | 284970 | 284970 | 284970 | 284970 | 284970 | 284970 | 284970 |
| 2 | Վանաձոր - 63853 (37082, 74472) զորամաս | 1572082 | 3144169 | 3144169 | 3144169 | 3144169 | 3144169 | 3144169 | 3144169 | 3144169 |
| 3 | Փամբակ - 53620 զորամաս | 23747 | 47495 | 47495 | 47495 | 47495 | 47495 | 47495 | 47495 | 47495 |
| 4 | Ստեփանավան - 51556 զորամաս | 237474 | 474950 | 474950 | 474950 | 474950 | 474950 | 474950 | 474950 | 474950 |
| 5 | Դիլիջան - 81151 զորամաս | 997400 | 1994845.09 | 1994845.09 | 1994845.09 | 1994845.09 | 1994845.09 | 1994845.09 | 1994845.09 | 1994845.09 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:* CPV-ի կոդը՝ 98391170/43/15/1

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
[illegible]ՍԱՐՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մատինյանի Նշխար» ՍՊԸ
ք. Վանաձոր, Բուսաբանական 3/6
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Վանաձորի մ/ճ
Հ/Հ 163138202409
ՀՎՀՀ 06924474
Տնօրեն
Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ